ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 8-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի մարտի 10-ին կայացած նիստի N2/2.4-25 արձանագրությամբ՝ «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից ընկերության կանոնադրության վերջին տարբերակի, ինչպես նաև շտկված ֆինանսական առաջարկի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ ընկերության

կանոնադրության վերջին տարբերակի, ինչպես նաև ընկերության ֆինանսական առաջարկում ԱԱՀ գումարը առանձին տողով ներկայացնելու վերաբերյալ, մրցութային հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է կանոնադրության վերջին տարբերակը և շտկված ֆինանսական առաջարկը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում Հանձնաժողովի անդամները, ուսումնասիրելով կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը, հայտնեցին դիրքորոշում, որ կազմակերպությունից պահանջված փաստաթղթերը ներկայացվել են պատշաճ և ժամանակին: Սակայն, Հանձնաժողովի կողմից լրացուցիչ հարց բարձրացվեց, ըստ որի, մեծ է հավանականությունը, որ Զբոսաշրջության կոմիտեի հանձնարարությամբ կազմակերպության կողմից ներկայացված ծրագրերի շրջանակում այցելող անձանց քանակը փոփոխվելու է (ըստ անհրաժեշտության), ուստի միջոցառման շրջանակում հետագա աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտություն չկա ֆինանսական նախահաշվում հյուրանոցային ծառայությունների կամ այլ աշխատանքների համար բաշխումը սահմանել՝ ըստ ծրագրերի:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը՝ **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի**ն՝ իր կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվի տողերը խմբավորել ըստ ուղղվածության՝ որևէ փոփոխություն չկատարելով յուրաքանչյուր ուղղվածության համար սահմանված ֆինանսավորման համար:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության՝

- **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի** հետ՝ շտկված ֆինանսական հախահաշիվը մինչև 2025 թվականի ապրիլի 14-ը ներկայացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)
Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաջյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____